

Թեմա 2. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ողջույն, շարունակենք ՀՀ ֆինանսական համակարգին վերաբերող տեսադասը:

Ինչպես տեսանք, ֆինանսական համակարգի մասնավոր հատվածում գործում են բազում կառույցներ, որոնցից յուրաքանչյուրը իր կարևոր դերն է խաղում ընդհանուր համակարգի կայացման գործում:

Իսկ այժմ եկեք դիտարկենք պետական հատվածը:

Այստեղ առաջին և կարևորագույն կառույցներից կառանձնացնեք, իհարկե, Կենտրոնական բանկը:

Այն մեր երկրի ֆինանսական համակարգը կարգավորող և վերահսկող կառույցն է: Կենտրոնական բանկն անկախ պետական հաստատություն է, որի հիմնական նպատակներն են **գների կայունության ապահովումն ու ֆինանսական համակարգի կայունությունը**: ԿԲ-ը թողարկում է ազգային արժույթը (դրամ), կառավարում է երկրի արժույթային պահուստները: Բացի այս, կենտրոնական բանկը պատասխանատու է նաև ֆինանսական համակարգի վերահսկողության, դրամավարկային քաղաքականության իրականացման, սպառողների իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովման, ինչպես նաև ֆինանսական համակարգին առնչվող այլ խնդիրների համար: Հատկանշական է, որ Կենտրոնական բանկը վարկեր չի տրամադրում, դա ԿԲ-ի գործառույթների մեջ չի մտնում: Այն սահմանում է տնտեսական կանոնակարգեր բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների համար:

Պետական հատվածի մասին խոսելիս վստահորեն կհիշենք ևս երկու կառույցների՝ **Ֆինանսական համակարգի հաշտարարի և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի** մասին:

Ֆինանսական համակարգի հաշտարարի (<https://fsm.am/>) գրասենյակը ստեղծվել է 2009 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ որպես առանձին անկախ կառույց: Գրասենյակի հիմնական նպատակն է հաճախորդների և ֆինանսական կազմակերպությունների միջև ծագած վեճերի անվճար և արագ լուծումը:

Մի փոքր ավելի վաղ՝ 2005 թվականին, կրկին կենտրոնական բանկի կողմից հիմնադրվել է նաև **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը**

(<https://www.adgf.am/>), որի հիմնական նպատակը Հայաստանի բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումն է՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով:

Այս երկու կառույցների մասին առավել մանրամասն խոսելու ենք առաջիկա տեսադասերի ընթացքում: